ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/4ՏՀ

ք. Երևան «06» սեպտեմբեր 2019թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սուֆետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Չիլինգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100-կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[18]

---

[18] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով[19]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8300000 (ութ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[20]: Վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիր կնքելու միջոցով:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[23] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[19] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

[20] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[24]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

---

[24] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02578338 Հ/Հ 900011002632	«Սուֆետ» ՍՊԸ ՀՀ Տավուշի մարզ, գ. Ջուջևան, 3 փող., 4. նրբ, 4 տուն «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570014998450100 ՀՎՀՀ 07404587
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 06 » սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/4ՏՀ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100-կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

Ծրագրի անվանումը	ՀՀ 2019թ. պետական բյուջեի պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում
Ֆինանսավորման աղբյուր	2019թ. ՀՀ պետական բյուջե
Պատվիրատու	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ծառայության անվանումը	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100-կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն
Ճանապարհի անվանումը	Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհ
Հատված	կմ129+100-կմ135+400
Աշխատանքի տեսակը	Ըստ նախագծի
Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ	• Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ունենա ճարտարագետ-շինարարի որակավորում և տրանսպորտային ոլորտի շինարարության որակի տեխնիկական հսկողության առնվազն 3 տարվա մասնագիտական փորձառություն): Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: • Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին: • Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը: • Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ պահանջել փոփոխել այն շինարարական նյութերը, որոնք չեն համապատասխանում պահանջվող որակի պահանջներին: • Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի: • Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաև օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների որակի հավաստագրերը, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: • Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար: • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով: • Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը):

	• Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը՝ շինարարության ընթացքում երթևեկության կազմակերպման հաստատված սխեմաների համապատասխան: • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր): • Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:
Նշանակված տեխնիկական հսկիչի տվյալների և հաշվետվությունների ներկայացման պահանջներ	• Կատարողը պարտավոր է պայմանագրով տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման պարտավորությունը ստանձնելուց հետո 3 (երեք) օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել տեխնիկական հսկողության ծառայության համար նշանակված տվյալ շինարարական տեղամասի տեխնիկական հսկիչի տվյալները (անուն, ազգանուն, ստորագրության նմուշ, հեռախոսի համար): • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ *<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>*, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: • *<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>* ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան՝ շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո 2 (երկու) օրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ: Ընթացիկ հաշվետվությունները ընդգրկելու են իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: • *<u>Ավարտական հաշվետվությունը</u>* պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով) • *<u>Ավարտական հաշվետվությունը</u>* ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում:
Նորմատիվային պահանջներ	Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝ • ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի, • Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի, • ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. Որոշման:
Ծառայությունների մատուցման ժամկետը	

սկիզբը	*ավարտը*
Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը	Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
Ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011002632

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սուֆետ» ՍՊԸ
ՀՀ Տավուշի մարզ, գ. Ջուջևան,
3 փող., 4. նրբ, 4 տուն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570014998450100
ՀՎՀՀ 07404587

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
« 06 » սեպտեմբեր 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/4Տ2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100-կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը
1	2	3	4
	I Հողային աշխատանքներ		
1	Քայքայված ճան. հագուստի քանդում 0.65մ3 էքս. բարձում տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	705.6
2	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	35.6
3	10eIV կարգի բնահողի մշակում ավտոգրեյդերով, տեղափոխում մինչև 10մ կուտակումով, բարձում 0.65մ³ էքս. տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	73.9
4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	8.2
5	Պահուստից 10eIV կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ³ բարձում, տեղափոխում 5կմ լիցքի իրականացման համար, հարթում, ջրում, խտացում:	մ³	162.0
	II Կողային առուներ		
1	Կողային առուների իրականացում (10eIV) կարգի բնահողում 0.65մ3 էքս. բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	137.0
3	Նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ³	14.2
	III Ճանապարհային հագուստ		
1	Գոյություն ունեցող ա/բ ծածկի ֆրեզում $h_{միջ}$=5սմ, վերադարձ սեփականատիրոջը:	մ²	78099.529
2	Փոսային նորոգում (h=3-5սմ):	մ²	953
3	Փոսային նորոգում հիմքով. - խճային հիմք (h=8-16սմ) բիտումի տարածումով - խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	145
4	Հարթեցնող շերտ մ/հ ա/բ $h_{միջ}$=3սմ	տ	1853.68
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	2169.41
6	Խճային հիմք h=15սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	2169.41
7	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	2169.41
8	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ²	2169.41
9	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	87644.529
10	Արհեստական անհարթությունների կառուցում $h_{միջ}$=7սմ	մ²	277.12
	IV Կողնակներ		
1	Կողնակների հարթեցում ավտոգրեյդերով:	մ²	2590.0
2	Կողնակների ամրացում ավազակոպիճով h=5սմ:	մ²	4580
	V Իջատեղեր		
1	10eIV կարգի բնահողի մշակում 0.65մ3 էքս., բարձում ա/ի, տեղափոխում 7մ լցակույտ:	մ³	151
2	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	16.56
3	Հողային պատառի հարթեցում ավտոգրեյդերով:	մ²	904
4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ²	90
5	Խճային հիմքի տեղադրում h=12սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²:	մ²	994.0
6	Փոսային նորոգում h=3-5սմ	մ²	16.0

7	Փոսային նորոգում հիմքով. - խճային հիմք (h=8-16սմ) բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	30.0
8	Մանրահատիկ ա/բ h=4սմ:	մ²	1358.74
9	Խողովակների համար խրամուղու կառուցում 10eIV բնահողում 0.65մ³ էքս. բարձում ա/ի տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	11.31
10	Նույնը՝ տեղում կուտակումով՝ հետլիցքի համար:	մ³	13.65
11	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	մ³	2.53
12	Մետ. D=530մմ խող. տեղադրում:	գծմ	39
13	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնով B20	մ³	3.84
14	Ջրամեկուսացում		
	- խողովակի	գծմ	36.0
	- բետոն	մ²	21.4
15	Հետադարձ լիցք ավտոգրեյդերով:	մ³	12.35
16	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	1.3
	VI Բետոնյա վաքեր		
	Գոյություն ունեցող բետոնյա վաքերի մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	145.30
	VII Ջրընդունիչ վաք՝ մետ. ցանցով		
1	Ա/բ ծածկի քանդում ձեռքի աշխատանքով հետահար մուրճով, բարձում ձեռքով ա/ի, տեղափոխում 7կմ լցակույտ	մ³	7.49
2	Փոսորակի փորում 10eIV բնահողում 0.65մ³ էքս. կողքի կուտակումով:	մ³	53.31
3	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	մ³	7.52
4	Միաձույլ ե/բ վաքեր B20 - ամրան Ø14A500C 662.4գծմ/0.8տ	մ³	27.84
5	Քսվածքային ջրամեկուսացում	մ²	96.0
6	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	12.8
7	Ավելացած գրունտի բարձում 0.65մ3 էքս., տեղափոխում լցակույտ 7կմ:	մ³	40.51
8	Մետ. ցանց ∟100x10 - 160գծմ/2.416տ ∟90x9 - 160գծմ / 1.952տ ∟90x9 - 83.2 գծմ / 1.015 տ Ø25A500C - 460.8 գծմ / 1.775 տ	տ	7.158
	VIII Գոյություն ունեցող ջրընդունիչ վաքեր		
1	Վաքերի մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	58.22
2	Մետ. N10 շվելերի (ցանց) ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը (մաշված):	տ	0.96
3	N10 շվելերով նմանատիպ ցանցի պատրաստում և տեղադրում:	տ	1.10639
4	Նոր թուջե ցանցերի տեղադրում (68x68)սմ	հատ	15
	IX Հենապատեր		
1	Հենապատի վերին մասում բնահողի մաքրում ձեռքով, բարձում ա/ի, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	1.51
2	Հենապատի "Մուշտակ" շարի վերականգնում:	մ²	218
3	Բազալտե թասակի տեղադրում		
	- 15 x 30սմ	գծմ	43.0
	- 10 x 30սմ	գծմ	57.0
	X Արգելափակոցներ		
1	Նոր մետ. արգելափակոցների տեղադրում	գծմ	152.0
2	Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցի ներկում - թիթեղ:	մ²	190
3	Ե/բ սյուների ներկում:	մ²	72.7

4	Ե/բ սյուների ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը:	հատ	72.0
5	Նոր ազդանշանային C1 տիպի պլաստիկ սյուների տեղադրում:	հատ	45
6	Գոյություն ունեցող մետաղական բազրիքների ներկում:	մ²	954.0
7	Բետոնյա արգելափակոցների ներկում:	մ²	620.0
	XI Մետ. Բազրիքներ		
1	10eIV բնահողի քանդում ձեռքի աշխատանքով, բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	19.6
2	Մետ. բազրիքների տեղադրում	գծմ	499.8
	ուղղանկյուն խողովակ 60x30x3	գծմ/կգ	950.64/3640.95
	ուղղանկյուն խողովակ 60x40x3	գծմ/կգ	624.24/2684.23
	ուղղանկյուն խողովակ 40x30x3	գծմ/կգ	749.5/2166.04
	ուղղանկյուն խողովակ 70x40x4	գծմ/կգ	20.4/126.27
3	Բետոնե B20 բարձիկ	մ³	19.56
4	Բետոնե հենապատի վրա ուղղահայաց անցքերի բացում d=80մմ l=45սմ:	հատ	27.0
	XII Դիտահորեր և անձրևահորեր		
1	Անձրևահորերի մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	3.4
2	Դիտահորերի բարձրացում բետոն B20	հատ	7
3	Դիտահորի մաքրում ձեռքով, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	0.6
4	Նոր ե/բ սալ (1.2x1.2)	հատ	1
5	Դիտահորերի իջեցում բետոն B20	հատ	2
	XIII Գծանշում		
1	Հոծ գիծ 1.1 - 1286 գծմ /128.6 մ² 1.2.1 - 280 գծմ / 28 մ²	մ²	156.6
2	Ընդհատ գիծ 1.5 (1:3) - 3922 գծմ / 98.05 մ² 1.8 (1:3) - 96 գծմ / 2.4 մ²	մ²	100.45
3	Ընդհատ գիծ 1.6 3:1	մ²	73.5
4	Ընդհատ գիծ 1.7 1:1	մ²	2.8
5	Գծանշում 1.14.1 - 345.4 1.25 - 72.0 1.16.1 (2) - 14.94	մ²	432.34
	XIV Մայթեր		
1	Մայթերի ծածկի ա/բ քանդում 0.65մ³ էքս., բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	319.95
2	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	3.2
3	Մայթերի բետոնե ծածկի քանդում 0.65մ³ էքս., բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	5.04
4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	0.53
5	Բետոնե (08x1.0x0.06) սալերի ապամոնտաժում 0.65մ³ էքս., բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	1.32
6	Մայթերի վրա կուտակված բնահողի բարձում 0.65մ³ էքս., տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	116
7	Նույնը՝ ձեռքի աշխատանքով:	մ³	12.5
8	Բազ. ե/ք ապամոնտաժում ձեռքի աշխատանքով՝ տեղում կուտակելով հետագա օգտագործման համար:	գծմ	286
9	Բետոնե եզրաքարի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը:	գծմ	47.0
10	Ե/ք տեղադրման համար փոսորակի մաքրում ձեռքի աշխատանքով, բարձում, տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	19.46

11	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե B20 հիմքի վրա 100գծմ 3.5մ³ բետոնե:	գծմ	326.0
12	Նույնը՝ նախօրոք օգտագործած:	գծմ	200.0
13	Միաձույլ բետոնե B20 եզրաշարի իրականացում (10x20սմ):	մ³	23.3
14	Միաձույլ բետոնե B20 եզրաշարի իրականացում (15x30սմ):	մ³	1.58
15	10x20 բազ. ե/ք տեղադրման համար ծառաբներում 10eIV բնահողի քանդում ձեռքով, կողքի կուտակումով:	մ³	1.44
16	10x20 բազ. ե/ք տեղադրում 100գծմ 3մ³ բետոն B15	գծմ	36
17	Կուտակած բնահողի ցրում տեղում	մ³	1.44
18	Ավազակոպճային շերտ $h_{միջ}$=5սմ	մ³	548.5
19	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ³	76.4
20	Մայթի բետոնե սալերի տեղադրում (0.8x1.0x0.06)	մ²	30
21	Ավազային ա/բ h=3սմ	մ²	11576.0
22	Ապամոնտաժված ոչ պիտանի բազալե եզրաքաերի բարձում 0.65մ³ էքս., տեղափոխում 7կմ լցակույտ:	մ³	3.9
	XV Խողովակներ		
1	Հունի մաքրում ելքում 10eIV, ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ³	5.5
2	Մաքրում խողովակի ներսում ձեռքի աշխատանքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ	մ³	12.0
3	Գլխամասի իրանի կառուցում B20 միաձույլ բետոնով	մ³	1.44
4	Գլխամասի թևերի կառուցում B20 միաձույլ բետոնով	մ³	1.28
5	Գլխամասի իրանի և թևերի ջրամեկուսացում	մ²	8.5
6	Վաքի և հենակային ատամի B20 միաձույլ բետոնով	մ³	1.09
7	Գլխադիրի կառուցում B20 բետոնով	մ³	0.96
	XVI Խողովակներ		
	D 720 մմ խողովակ		
1	Ա/բ ծածկի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ հեռավորության վրա:	մ³	3.02
2	Խողովակի տեղադրման համար փոսորակի իրականացում հողային պաստառի քանդում էքս. 0.65 շտ, կողքի կուտակումով - 10eIV:	մ³	123.68
3	Նույնը՝ ձեռքով:	մ³	13.0
4	Միաձույլ եզրաշարի ապամոնտաժում բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 7 կմ հեռ վրա:	մ³	0.04
5	Բազալտե եզրաքարի ապամոնտաժում հետագա տեղադրումով հիմքի բետոն - 100 գմ-ին 3.5 մ³, B15:	գմ	2.0
6	Գոյություն ունեցող պատի միաձույլ բետոնի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7 կմ հեռավորության վրա:	մ³	2.86
7	Բազալտե երեսապատման քարերի ապամոնտաժում կողքի կուտակումով «մուշտակի տակ»:	մ²	5.6
8	Ձեռքով համահարթեցման աշխատանքներ:	մ²	37.6
9	Խողովակի տեղադրման համար խճային բարձիկի իրականացում	մ³	15.36
10	D=720 մմ պողպատե խողովակի տեղադրում - d=8 մմ:	գմ	23
11	Մետաղական խողովակի գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	գծմ	22.0
12	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	2.6
13	Հենապատի քսվածքային երկշերտ ջրամեկուսացում:	մ²	5.2
14	Հետլիցք բուլդոզերով ջրումով և շերտ շերտ տոփանումով:	մ³	96.75
15	Նույնը՝ ձեռքով	մ³	9.5

16	Ավելնորդ գրունտի բարձում ա/ի 0.65 մ³ շերեփ էքս. 10eIV, տեղափոխում լցակույտ 7 կմ հեռ վրա:	մ³	30.43
17	Եզրաշարի վերականգնում B20 դասի միաձույլ բետոնով:	մ³	0.04
18	Բազալտե երեսապատման վերականգնում կողքի պահեստավորված քարերով՝ «մուշտակի տակ»:	մ²	5.19
19	Սիզամարգի լրալցում սնահողով h=10սմ:	մ³	0.4
20	Մայթի ավազակոպճային շերտի տեղադրում h=12սմ	մ³	0.48
	Ջրհորի իրականացում		
1	Անձրևահորի իրականացման համար փոսորակների փորման հողային աշխատանքներ 0.65 մ³ շերեփ էքս. 10eIV:	մ³	3.6
2	Նույնը ձեռքի աշխատանքով կողքի կուտակումով:	մ³	0.4
3	Ջրհորի տակ h=10 սմ ավազակոպճային շերտի տեղադրում:	մ³	0.14
4	Ջրհորի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով, ամրան & 14մմ A500c - L=10.92 մ P=13.2 կգ:	մ³	1.64
5	Կափարիչի (ցանցի) իրականացում այդ թվում. ∟100x10 L=2.0 մ P=30.2 կգ, ∟90x9 L=3.04 մ P=37.09 կգ, &25 A500c L=14 մ P=22.19 կգ,	տ	0.0895
6	Գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում (2 շերտ):	մ²	6.65
7	Հետլիցք ձեռքով՝ ջրումով և շերտ շերտ տոփանումով:	մ³	2.18
8	Ավելնորդ գրունտի բարձում ա/ի 0.65 մ³ շերեփ էքս. 10eIV, տեղափոխում լցակույտ 7 կմ հեռ վրա:	մ³	1.82
	Ջրընդունիչ		
1	Փոսորակի փորում 10eIV կարգի բնահողում էքս.0,65մ³ շ.տ. կողքի կուտակումով:	մ³	3.0
2	Նույնը՝ ձեռքով	մ³	0.8
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	0.47
4	Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք (բետոն B-20) ամրան & 14մմ A500c - 50.01 կգ:	մ³	1.74
5	Ցանցի իրականացում ամրան & 25մմ A500c - L=28.8 մ, P=110.97 կգ Անկյունակ L 100x10մմ - L=10 մ, P= 151.0 կգ Անկյունակ L 90x9մմ - L=15.2 մ, P=185.44 կգ	կգ	447.41
6	Քսվածքային ջրամեկուսացում	մ²	6.0
7	Հետլիցք ձեռքով	մ³	0.80
8	Ավելացած գրունտի բարձում ա/ի էքս. 0.65 մ³ շ.տ. տեղափոխում լցակույտ 7 կմ հեռ. վրա:	Ն³	3.0
	Ջրհոր և մետաղական խողովակ		
1	Մետաղական կոնստրուկցիաների ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը	կգ	850
2	10eIV կարգի բնահողի մշակում ձեռքով՝ կողքի կուտակումով	մ³	1.6
3	Խճային հիմք h=10սմ	մ³	0.3
4	Միաձույլ բետոն B20 - հատակ - 0.6 մ³ - պատեր - 1.58 մ³	մ³	2.18
5	Ջրհորի ջրամեկուսացում	մ²	6.31
6	Մետաղական d=530մմ խողովակի տեղադրում	գծ.մ	14
7	Խողովակի միացում գործող վաքին 2 տեղ միաձույլ բետոն B20 բետոն(0.116x2)	մ³	0.23
8	Միացման վաքի ջրամեկուսացում	մ²	1.13
9	d=530մմ խողովակի ջրամեկուսացում	գծ.մ	13.5

10	Ջրհորի պատերի վրա 4 տեղ մետաղական պատյանի տեղադրում d=108մմ d=3մմ	գծ.մ	1
11	Պահուստից 10eIV կարգի բնահողի բարձում էքս.1.0մ³ շ.տ. ա/ի և տեղափոխում 5կմ լիցք իրականացնելու համար, ջրում, խտացում	մ³	12
12	Ե/բ սալի թուջե ցանց(68x68), թուջե դիտանցքով (1.5x1.4)	կոմպլեկտ	1
	XVII Կամուրջներ		
	Ե/բ կամուրջ կմ 133+560-ում		
1	Բազրիքատակ պատվանդանի քայքայված միաձույլ բետոնի կազմատում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7կմ հեռ. վրա:	մ³	4.94
2	Մայթերի քայքայված ա/բ կազմատում ձեռքով , բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 7կմ հեռ. վրա h=3 սմ:	մ²	156
3	Կամրջային պաստառի և կցորդման տեղամասերի ֆրեզում 5 սմ հաստությամբ վերաարձ սեփականատիրոջը:	մ²	1746
4	Հենարանների կանգնակների վերանորոգում M200 մակնիշի ցեմ շաղախով, b=5 սմ:	մ²	49.2
5	Հենարանների ոիգելների միավորման տեղամասերում պաշտպանիչ բետոնի վերականգնում M200 մակնիշի ցեմ շաղախով, b=5 սմ:	մ²	13.5
6	Բազրիքատակ պատվանդանի վերականգնում B20 դասի միաձույլ բետոնով L=22.9 մ, b=0.3 մ:	մ³	4.94
7	Պարապետների բազալտե թասակների վերականգնում համանման գոյություն ունեցողի - b=4 (L=22.9 մ):	մ²	6.9
8	Պարապետների բազալտե երեսապատման վերականգնում համանման գոյություն ունեցողի - b=2 սմ:	մ²	0.8
9	Մայթերի սահմաններում հարթեցնող ավազակոպճային շերտի տեղադրում հմիջ.=5սմ:	մ3	7.8
10	Մայթերի սահմաններում ավազային ա/բետոնի տեղադրում հմիջ.=3.5սմ:	մ²	156
11	Պողպատե բազրիքների երկշերտ ներկում:	մ²	108.0
12	Կամրջային պաստառի և կցորդման ֆրեզված տեղամասերի վրա մանրահատիկ ա/բետոնի տեղադրում h=5 սմ հաստությամբ:	մ²	1746.0
13	Անվահրիչների ուղղահայաց գծանշում:	մ²	75.4
14	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում - հոծ:	գմ	116.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
Ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011002632

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սուֆետ» ՍՊԸ
ՀՀ Տավուշի մարզ, գ. Ջուջևան,
3 փող., 4. նրբ, 4 տուն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570014998450100
ՀՎՀՀ 07404587

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« »_____ 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/4ՏՀ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
___
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« »_____ 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ- 2019/4ՏՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
06.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/4ՏՀ պետական գնման պայմանագրի

ք. Երևան **<< 15>> հոկտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Սուֆետ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Չիլինգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2019թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1184-Ն և 1209-Ա որոշումների և հիմք ընդունելով Կողմերի միջև 06.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/4ՏՀ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2019թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Սուֆետ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ Տավուշի մարզ, գ. Ջուջևան,
ՀՀ կենտրոնական գանձապետարան	3 փող., 4. Նրբ, 4 տուն
ՀՎՀՀ 02578338	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011002632	ՀՎՀՀ 07404587
	ՀՀ 1570014998450100
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԾՁԲ-2019/4ՏՀ գնման պայմանագրի
«15» հոկտեմբերի 2019թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Մ-4, Երևան-Սևան-Իջևան – Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100 – կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	71351540/63	Մ-4, Երևան Սևան-Իջևան – Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ129+100 – կմ135+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների										8300000	8300000	8300000	**8300000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011002632
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
«Սուֆետ» ՍՊԸ
ՀՀ Տավուշի մարզ, գ. Ջուջևան,
3 փող., 4. Նրբ, 4 տուն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 07404587
ՀՀ 1570014998450100
/ստորագրություն/